ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԳՀԱՊՁԲ-20-9/30-4

ք. Երևան 04 -ը սեպտեմբերի 2020թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ Ն. Յոլչյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետ «Գնորդ», մի կողմից, և **«ԿՈՆՑԵՌՆ-ԷՆԵՐԳՈՄԱՇ» ՓԲԸ-ն**՝ ի դեմս ընկերության տնօրեն **Բ. Թադևոսյանի,** ով գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է ***34,609,290 (երեսունչորս միլիոն վեց հարյուր ինը հազար երկու հարյուր իննսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն, բացառությամբ պայմանագրի Հավելված 1-ով սահմանված 45-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքատեսակի մասով Վաճառողն ԱԱՀ չի վճարում:***

Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է ***15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև 10.12.2020թ.:***

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն այունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը կնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության

օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 15 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.16 Սույն պայմանագով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչությունը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում **ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչությունը:**

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ
ք. Երևան Բագրևանդի 5	Ք. Երևան, Արզումանյան 32-10
ՀՀ ՖՆԱ գործառնական վարչություն	«Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան» ՓԲԸ
Հ/Հ 900011144129	Հ/Հ 217002182558001
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 01210095
ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ	տնօրեն
Ն. ՅՈԼՉՅԱՆ	Բ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Հ/հ	Գնման ենթակա ապրանքների անվանումը	Տեխնիկական հատկանիշներ	անվանումը	ապրանքային նշանը	արտադրողի անվանումը	անվանումը
1.	pH միկրոէլեկտրոդ	Cobas b 121 անալիզատորի համար, գործարանային փաթեթավորմամբ:	MICRO ELECTRODE PH	MICRO ELECTRODE PH	Roche Diagnostics	MICRO ELECTRODE PH
2.	pCO2 միկրոէլեկտրոդ	Cobas b 121 անալիզատորի համար, գործարանային փաթեթավորմամբ:	MICRO ELECTRODE PCO2	MICRO ELECTRODE PCO2	Roche Diagnostics	MICRO ELECTRODE PCO2
3.	pO2 միկրոէլեկտրոդ	Cobas b 121 անալիզատորի համար, գործարանային փաթեթավորմամբ:	MICRO ELECTRODE PO2	MICRO ELECTRODE PO2	Roche Diagnostics	MICRO ELECTRODE PO2
4.	Ռեֆերենս էլեկտրոդ	Cobas b 121 անալիզատորի համար, գործարանային փաթեթավորմամբ:	MICRO ELECTRODE REF	MICRO ELECTRODE REF	Roche Diagnostics	MICRO ELECTRODE REF
5.	Na միկրո էլեկտրոդ	Cobas b 121 անալիզատորի համար, գործարանային փաթեթավորմամբ:	MICRO ELECTRODE NA+	MICRO ELECTRODE NA+	Roche Diagnostics	MICRO ELECTRODE NA+
6.	K միկրո էլեկտրոդ	Cobas b 121 անալիզատորի համար, գործարանային փաթեթավորմամբ:	MICRO ELECTRODE K+	MICRO ELECTRODE K+	Roche Diagnostics	MICRO ELECTRODE K+
7.	Ca միկրոէլեկտրոդ	Cobas b 121 անալիզատորի համար, գործարանային փաթեթավորմամբ:	MICRO ELECTRODE CA++	MICRO ELECTRODE CA++	Roche Diagnostics	MICRO ELECTRODE CA++
8.	Cl միկրոէլեկտրոդ	Cobas b 121 անալիզատորի համար, գործարանային փաթեթավորմամբ:	MICRO ELECTRODE CL	MICRO ELECTRODE CL	Roche Diagnostics	MICRO ELECTRODE CL
9.	C1 կալիբրատոր լուծույթ	Նախատեսված է Cobas b 121 անալիզատորի համար, 15-25 C աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ	C1 CALIBRATION SOLUTION 1	C1 CALIBRATION SOLUTION 1	Roche Diagnostics	C1 CALIBRATION SOLUTION 1
10.	C2 կալիբրատոր լուծույթ	Նախատեսված է Cobas b 121 անալիզատորի համար, 15-25 C աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ	C2 CALIBRATION SOLUTION 2	C2 CALIBRATION SOLUTION 2	Roche Diagnostics	C2 CALIBRATION SOLUTION 2
11.	C3 հեղուկի Փաթեթ	Նախատեսված է Cobas b 121 անալիզատորի համար, 15-25 C աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ	FLUID PACK C3 (1 PC)	FLUID PACK C3 (1 PC)	Roche Diagnostics	FLUID PACK C3 (1 PC)
12.	Դեպրոտեինայզեր 125 մլ	125մլ, 15-25 C աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ	DEPROTEINIZER (125 ML)	DEPROTEINIZER (125 ML)	Roche Diagnostics	DEPROTEINIZER (125 ML)
18.	Պրոկալցիտոնինի որոշման շտապ թեսթ	PCT Brahms իմունոքրոմատոգրաֆիկ թեսթ, պրոկալցիտոնինի կիսաքանակական շտապ որոշման համար, գործարանային փաթեթավորումով, լրակազմում 25 թեսթ	Brahms PCT-Q 25 tests	Brahms PCT-Q 25 tests	Thermo Fisher Scientific (Brahms GmbH)	Brahms PCT-Q 25 tests
23.	VITEK 2 GP 20 քարտ	Նախատեսված է VITEK սարքի շահագործման համար, գրամ դրական մանրէների տարբերակման քարտ,լրակազմում 20 հատ պահել + 2°C -ից + 8°C ջերմաստիճանում, գործարանային փաթեթավորումով	VITEK 2 GP 20 քարտ	GP TEST KIT VTK2	BioMerieux	VITEK 2 GP 20 քարտ

24.	VITEK 2 YST 20 քարտ	Նախատեսված է VITEK սարքի շահագործման համար, սնկերի տարբերակման քարտ,լրակազմում 20 հատ պահել + 2°C -ից + 8°C ջերմաստիճանում, գործարանային փաթեթավորումով	VITEK 2 YST 20 քարտ	YST TEST KIT VTK2	BioMerieux	VITEK 2 YST 20 քարտ
25.	VITEK 2 NH 20 քարտ	Նախատեսված է VITEK սարքի շահագործման համար, նեյսերիա հեմոֆիլների տարբերակման քարտ 20 հատ պահել + 2°C -ից + 8°C ջերմաստիճանում, գործարանային փաթեթավորումով	VITEK 2 NH 20 քարտ	NH TEST KIT VTK2	BioMerieux	VITEK 2 NH 20 քարտ
26.	VITEK 2 AST 20 քարտ GN համար	Նախատեսված է VITEK սարքի շահագործման համար, գրամ բացասական մանրէների հակաբիոտիկազգայնության լրակազմում՝ 20 հատ քարտ, պահել + 2°C -ից + 8°C ջերմաստիճանում, գործարանային փաթեթավորումով	VITEK 2 AST 20 քարտ GN համար	AST-N215 TEST KIT	BioMerieux	VITEK 2 AST 20 քարտ GN համար
27.	VITEK 2 AST 20 քարտ GP համար	Նախատեսված է VITEK սարքի շահագործման համար, գրամ դրական մանրէների հակաբիոտիկազգայնության քարտ լրակազմում 20 հատ պահել + 2°C -ից + 8°C ջերմաստիճանում, գործարանային փաթեթավորումով	VITEK 2 AST 20 քարտ GP համար	AST-P592 TEST KIT	BioMerieux	VITEK 2 AST 20 քարտ GP համար
29.	BTA FN անաէրոբ միջավայր արյան ստերիլության որոշման	Նախատեսված է Bact/Alert սարքով արյան մեջ անաէրոբ մանրէների հայտնաբերման համար, միջավայր շիշ, 40մլ միջավայրի պարունակությամբ, գործարանային փաթեթավորմամբ	BTA FN անաէրոբմիջավայրարյան ստերիլությանորոշման	BACT/ALERT FN PLUS	BioMerieux	BTA FN անաէրոբմիջավայրարյա նստերիլությանորոշման
30.	GENbox անաէրոբ գազային գեներատոր	Անաէրոբ գեներատոր, լրակազմում 10 հատ, պահել սենյակային ջերմաստիճանում, գործարանային փաթեթավորմամբ	GENboxանաէրոբգազային գեներատոր	GENBOX ANAER	BioMerieux	GENboxանաէրոբգազայի նգեներատոր
31.	GENbox միկրոաէրոֆիլ գազային գեներատոր	միկրոաէրոֆիլ գեներատոր, լրակազմում 10 հատ, պահել սենյակային ջերմաստիճանում, գործարանային փաթեթավորմամբ	GENboxմիկրոաէրոֆիլգա զայինգեներատոր	GENBOX MICROAER	BioMerieux	GENboxմիկրոաէրոֆիլգա զայինգեներատոր
32.	մեզի քրոմոգեն միջավայր	Մեզի մանրէաբանական հետազոտման քրոմոգեն միջավայր chromID CPS Elite լրակազմում 20 պետրիի թասիկ, պահել + 2°C -ից + 8°C ջերմաստիճանում, գործարանային փաթեթավորմամբ	մեզիքրոմոգենմիջավայր	CHROMID CPS ELITE	BioMerieux	մեզիքրոմոգեն միջավայր
33.	BTA FA աէրոբ միջավայր արյան ստերիլության որոշման 100 շիշ	Նախատեսված է Bact/Alert սարքով արյան մեջ աէրոբ մանրէների հայտնաբերման միջավայր շիշ, պահել սենյակային ջերմաստիճանում, գործարանային փաթեթավորմամբ	BTA FA աէրոբմիջավայրարյանստ երիլությանորոշման 100 շիշ	BACT/ALERT FA PLUS	BioMerieux	BTA FA աէրոբմիջավայրարյանս տերիլությանորոշման 100 շիշ

35.	Միկոպլազմա IST 2 25 թեսթ	ՈՒրոգենիտալ քսուքներում միկոպլազմա ուրեոպլազմա հայտնաբերման, քանակական որոշման, 9 հակաբակտերիալ պրեպարատների նկատմամբ զգայնության հավաքածու, լրակազմում 25 թեսթ, պահել + 2°C -ից + 8°C ջերմաստիճանում, գործարանային փաթեթավորմամբ	Միկոպլազմա IST 2 25 թեսթ	MYCOPLASMA IST 2 25 TESTS	BioMerieux	Միկոպլազմա IST 2 25 թեսթ
38.	Տրանսպորտային միջավայր ուրոգենիտալ քսուքներում գոնոկոկերի աճեցման համար (10 ագար/սլայդ)	Տրանսպորտային միջավայր ուրոգենիտալ քսուքներում գոնոկոկերի աճեցման համար Vagitest, լրակազմում՝ 10 հատ սլայդ, պահել + 2°C -ից + 8°C ջերմաստիճանում, գործարանային փաթեթավորմամբ	Vagitest	Vagitest	Liofilchem	Vagitest
39.	Աղային 0,45% լուծույթ 3x500ml	VITEK սարքի աշխատանքային աղային լուծույթ 0.45 % ,լրակազմում՝3 x 500 մլ շիշ, պահել սենյակային ջերմաստիճանում, գործարանային փաթեթավորմամբ	Աղային 0,45% լուծույթ 3x500ml	SALINE SOLUTION	BioMerieux	Աղային 0,45% լուծույթ 3x500ml
43.	VITEK 2 ANC անաէրոբ մանրէների տարբերակման քարտ	Լրակազմում առնվազն 20 քարտ, գործարանային փաթեթավորմամբ	VITEK 2 ANC անաէրոբմանրէներիտարբերակմանքարտ	ANC TEST KIT VTK2 20CARDS	BioMerieux	VITEK 2 ANC անաէրոբմանրէներիտարբերակմանքարտ
44.	Անաէրոբ գեներատորի ինդիկատորներ 50 երիզ	Լրակազմում 50 երիզ/տուփ, գործարանային փաթեթավորմամբ	Անաէրոբգեներատորիին դիկատորներ 50 երիզ	ANAEROBIC INDICATOR X50	BioMerieux	Անաէրոբգեներատորիին դիկատորներ 50 երիզ
45.	BTA Subculture units 100 units	Լրակազմում 100 հատ, գործարանայինփաթեթավորմամբ	BTA Subculture units 100 units	STERILE AIRWAY NEEDLES	BioMerieux	BTA Subculture units 100 units
49.	Գլյուկոզա 30 թեսթ	Reflotron Glucoseնախատեսված է Ռեֆլոտրոն բիոքիմիական սարքի համար, որը աշխատում է ռեֆլակտրոմետրիայի սկզբունքով, ստրիպները իրենցից ներկայացնում են չոր քիմիա, լրակազմում՝30 ստրիպ, հերմետիկ փակ տուփ, գործարանային փաթեթավորմամբ:	Reflotron-Glucose 30 Str.	Reflotron-Glucose 30 Str.	Roche Diagnostics	Reflotron-Glucose 30 Str.
50.	Հիմնային ֆոսֆատազա 30 թեսթ	Reflotron ALPնախատեսված է Ռեֆլոտրոն բիոքիմիական սարքի համար որը աշխատում է ռեֆլակտրոմետրիաի սկզբունքով, ստրիպները իրենցից ներկայացնում են չոր քիմիա, լրակազմում՝30 ստրիպ, հերմետիկ փակ տուփ, գործարանային փաթեթավորմամբ:	Reflotron-ALP 30str.	Reflotron-ALP 30str.	Roche Diagnostics	Reflotron-ALP 30str.
51.	Պանկրեատիկ-ամիլազա, 15 թեսթ	Reflotron Pankreas-Amylase նախատեսված է Ռեֆլոտրոն բիոքիմիական սարքի համար որը աշխատում է ռեֆլակտրոմետրիաի սկզբունքով,ստրիպները իրենցից ներկայացնում են չոր քիմիա,լրակազմում 15 ստրիպ, հերմետիկ փակ գործարանային փաթեթավորմամբ:	Reflotron-P-Amylase 15 Str.	Reflotron-P-Amylase 15 Str.	Roche Diagnostics	Reflotron-P-Amylase 15 Str.

52.	Ամիլազա 15 թեսթ	Reflotron Amylase նախատեսված է Ռեֆլոտրոն բիոքիմիական սարքի համար որը աշխատում է ռեֆլակտրոմետրիաի սկզբունքով, ստրիպները իրենցից ներկայացնում են չոր քիմիա,լրակազմում 15 ստրիպ հերմետիկ փակ գործարանային փաթեթավորմամբ:	Reflotron-Amylase 15 Str.	Reflotron-Amylase 15 Str.	Roche Diagnostics	Reflotron-Amylase 15 Str.
53.	Բիլիռուբին 30 թեսթ	Reflotron Bilirubin նախատեսված էՌեֆլոտրոն բիոքիմիական սարքի համար որը աշխատում է ռեֆլակտրոմետրիաի սկզբունքով, ստրիպները իրենցից ներկայացնում են չոր քիմիա, լրակազմում՝ 30 ստրիպ, հերմետիկ փակ տուփ, գործարանային փաթեթավորմամբ:	Reflotron-Bilirubin 30 Str.	Reflotron-Bilirubin 30 Str.	Roche Diagnostics	Reflotron-Bilirubin 30 Str.
54.	Խոլեսթերոլ, 30 թեսթ	Reflotron Cholesterol նախատեսված է Ռեֆլոտրոն բիոքիմիական սարքի համար որը աշխատում է ռեֆլակտրոմետրիաի սկզբունքով, ստրիպները իրենցից ներկայացնում են չոր քիմիա, լրակազմում 30 ստրիպ, հերմետիկ փակ գործարանային փաթեթավորմամբ:	Reflotron-Cholesterol 30 Str.	Reflotron-Cholesterol 30 Str.	Roche Diagnostics	Reflotron-Cholesterol 30 Str.
55.	Կրեատինին կինազա 15 թեսթ	Reflotron CK նախատեսված է Ռեֆլոտրոն բիոքիմիական սարքի համար որը աշխատում է ռեֆլակտրոմետրիաի սկզբունքով, ստրիպները իրենցից ներկայացնում են չոր քիմիա, լրակազմում 15 ստրիպ հերմետիկ փակ գործարանային փաթեթավորմամբ:	Reflotron-CK 15 Str.	Reflotron-CK 15 Str.	Roche Diagnostics	Reflotron-CK 15 Str.
56.	Կրեատինին 30 թեսթ	Reflotron Creatinine նախատեսված է Ռեֆլոտրոն բիոքիմիական սարքի համար որը աշխատում է ռեֆլակտրոմետրիաի սկզբունքով, ստրիպները իրենցից ներկայացնում են չոր քիմիա, լրակազմում 30 ստրիպ հերմետիկ փակ գործարանային փաթեթավորմամբ:	Reflotron-Creatinin 30 Str.	Reflotron-Creatinin 30 Str.	Roche Diagnostics	Reflotron-Creatinin 30 Str.
57.	Գամմա գլուտամիլ տրանսֆերազա, 30 թեսթ	Reflotron GGTնախատեսված է Ռեֆլոտրոն բիոքիմիական սարքի համար որը աշխատում է ռեֆլակտրոմետրիաի սկզբունքով, ստրիպները իրենցից ներկայացնում են չոր քիմիա, լրակազմում՝ 30 ստրիպ, հերմետիկ փակ տուփ, գործարանային փաթեթավորմամբ:	Reflotron-GGT 30 Str.	Reflotron-GGT 30 Str.	Roche Diagnostics	Reflotron-GGT 30 Str.
60.	Կալիումի 30 թեսթ	Reflotron Kalium (potassium) նախատեսված է Ռեֆլոտրոն բիոքիմիական սարքի համար որը աշխատում է ռեֆլակտրոմետրիաի սկզբունքով, ստրիպները իրենցից ներկայացնում են չոր քիմիա, լրակազմում՝ 30 ստրիպ, հերմետիկ փակ տուփ, գործարանային փաթեթավորմամբ:	Reflotron-Potassium	Reflotron-Potassium	Roche Diagnostics	Reflotron-Potassium

61.	Տրիգլիցերիդների 30 թեսթ	Reflotron Triglyceridesնախատեսված է Ռեֆլոտրոն բիոքիմիական սարքի համար որը աշխատում է ռեֆլակտրոմետրիաի սկզբունքով, ստրիպները իրենցից ներկայացնում են չոր քիմիա, լրակազմում 30 ստրիպ, հերմետիկ փակ գործարանային փաթեթավորմամբ:	Reflotron-Triglyceride 30 Str.	Reflotron-Triglyceride 30 Str.	Roche Diagnostics	Reflotron-Triglyceride 30 Str.
62.	Միզանյութ 15 թեսթ	Reflotron Urea նախատեսված է Ռեֆլոտրոն բիոքիմիական սարքի համար որը աշխատում է ռեֆլակտրոմետրիաի սկզբունքով, ստրիպները իրենցից ներկայացնում են չոր քիմիա,լրակազմում 15 ստրիպ, հերմետիկ փակ, գործարանային փաթեթավորմամբ:	Reflotron-Urea 15 Str.	Reflotron-Urea 15 Str.	Roche Diagnostics	Reflotron-Urea 15 Str.
63.	Ռեֆլոտրոն կլին և չեկ15	լրակազմում 15 հատ, նախատեսված է Ռեֆլոտրոն բիոքիմիական սարքի համար, գործարանային փաթեթավորմամբ:	Reflotron Clean + Check	Reflotron Clean + Check	Roche Diagnostics	Reflotron Clean + Check

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՆՏԱ գլխավոր վարչության պետ

Ն. ՅՈԼՉՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ
տնօրեն

Բ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ԱՀ 033 7548

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Գնման առարկայի						
չ/հ	անվանումը	չ/մ	քանակը	միավորի գինը (<< դրամ)	ընդհանուր գումարը (<< դրամ)	մատակարարումը՝ 2020թ., 3-րդ եռամսյակ
1.	pH միկրոէլեկտրոդ	հատ	3	119,000	357,000	3
2.	pCO2 միկրոէլեկտրոդ	հատ	3	293,000	879,000	3
3.	pO2 միկրոէլեկտրոդ	հատ	4	234,000	936,000	4
4.	Ռեֆերենս էլեկտրոդ	հատ	3	142,000	426,000	3
5.	Na միկրո էլեկտրոդ	հատ	4	124,000	496,000	4
6.	K միկրո էլեկտրոդ	հատ	4	108,000	432,000	4
7.	Ca միկրոէլեկտրոդ	հատ	4	110,000	440,000	4
8.	Cl միկրոէլեկտրոդ	հատ	4	104,000	416,000	4
9.	C1 կալիբրատոր լուծույթ	լրակազմ	4	52,830	211,320	4
10.	C2 կալիբրատոր լուծույթ	լրակազմ	4	52,830	211,320	4
11.	C3 հեղուկի Փաթեթ	լրակազմ	10	79,350	793,500	10
12.	Դեպրոտեինայզեր 125 մլ	հատ	10	14,000	140,000	10
18.	Պրոկալցիտոնինի որոշման շտապ թեսթ	լրակազմ	3	310,000	930,000	3
23.	VITEK 2 GP 20 քարտ	լրակազմ	20	96,500	1,930,000	20
24.	VITEK 2 YST 20 քարտ	լրակազմ	2	105,000	210,000	2
25.	VITEK 2 NH 20 քարտ	լրակազմ	1	105,000	105,000	1
26.	VITEK 2 AST 20 քարտ GN համար	լրակազմ	20	97,000	1,940,000	20
27.	VITEK 2 AST 20 քարտ GP համար	լրակազմ	20	97,000	1,940,000	20
29.	BTA FN անաէրոբ միջավայր արյան ստերիլության որոշման	հատ	100	4,060	406,000	100
30.	GENbox անաէրոբ գազային գեներատոր	լրակազմ	3	18,000	54,000	3
31.	GENbox միկրոաէրոֆիլ գազային գեներատոր	լրակազմ	3	19,000	57,000	3
32.	մեզի քրոմոգեն միջավայր	լրակազմ	50	32,000	1,600,000	50
33.	BTA FA աէրոբ միջավայր արյան ստերիլության որոշման 100 շիշ	հատ	100	4,060	406,000	100
35.	Միկոպլազմա IST 2 25 թեսթ	լրակազմ	12	162,500	1,950,000	12
38.	Տրանսպորտային միջավայր ուրոգենիտալ քսուքներում գոնոկոկերի աճեցման համար (10 ագար/սլայդ)	լրակազմ	2	15,000	30,000	2
39.	Աղային 0,45% լուծույթ 3x500ml	լրակազմ	4	17,000	68,000	4
43.	VITEK 2 ANC անաէրոբ մանրէների տարբերակման քարտ	լրակազմ	1	135,000	135,000	1
44.	Անաէրոբ գեներատորի ինդիկատորներ 50 երիզ	լրակազմ	1	22,900	22,900	1
45.	BTA Subculture units 100 units	լրակազմ	1	116,000	116,000	1
49.	Գլյուկոզա 30 թեսթ	լրակազմ	110	21,000	2,310,000	110
50.	Հիմնային ֆոսֆատազա 30 թեսթ	լրակազմ	30	28,000	840,000	30

51.	Պանկրեատիկ-ամիլազա, 15 թեսթ	լրակազմ	40	17,000	680,000	40
52.	Ամիլազա 15 թեսթ	լրակազմ	50	14,500	725,000	50
53.	Բիլիռուբին 30 թեսթ	լրակազմ	110	24,000	2,640,000	110
54.	Խոլեսթերոլ, 30 թեսթ	լրակազմ	25	25,000	625,000	25
55.	Կրեատինին կինազա 15 թեսթ	լրակազմ	20	19,000	380,000	20
56.	Կրեատինին 30 թեսթ	լրակազմ	110	28,000	3,080,000	110
57.	Գամմա գլուտամիլ տրանսֆերազա, 30 թեսթ	լրակազմ	40	24,000	960,000	40
60.	Կալիումի 30 թեսթ	լրակազմ	50	33,000	1,650,000	50
61.	Տրիգլիցերիդների 30 թեսթ	լրակազմ	50	28,000	1,400,000	50
62.	Միզանյութ 15 թեսթ	լրակազմ	110	14,500	1,595,000	110
63.	Ռեֆլոտրոն կլին և չեկ15	լրակազմ	15	5,750	86,250	15
Ընդամենը					**34,609,290**	

Ծանոթություն՝

Ապրանքները պետք է ունենան.

1.Եվրամիության և/կամ ԵԱՏՄ երկրներից որևէ մեկում և/կամ ԱՄՆ-ում և/ կամ Ճապոնիայում ապրանքների գրանցման հավաստագիր (բացառություն են կազմում ՀՀ-ում արտադրված ապրանքները):

2.Արտադրողին տրված՝ արտադրության անվտանգության և որակի վերահսկման միջազգային հավաստագիր (ISO, GMP, CE Mark կամ այլ):

3.Արտադրող կազմակերպության (կամ արտադրողի պաշտոնական ներկայացուցչի)՝ կողմից տվյալ ապրանքի համար տրված համապատասխանության և (կամ) որակի հավաստագիր:

4.Պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքների դեպքում՝ապրանքատեսակները հանձնման պահին պետք է ունենան առնվազն պիտանելիության ժամկետի 1/2-ը:

5. Մատակարարման վայր սահմանել ք. Աբովյան, Արզնու խճուղի՝ կենտրոնական բազա:

թիվ 1,2,3 կետերով պահանջվող հավաստագրերի պատճենները ներկայացվում են ապրանքների մատակարարման ժամանակ

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՆՏԱ գլխավոր վարչության պետ

Ն. ՅՈԼՉՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ
տնօրեն

Բ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ԱՀ 033 7548

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Գնման առարկայի				
չ/հ	CPV և ապրանքի անվանումները	CPV կոդը	Նախատեսվում է ֆինանսավորել 2020թ. ըստ եռամսյակների, բայց ոչ ուշ, քան 10.12.2020թ., ընդ որում՝	
			3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ
1.	**Լաբորատոր օժանդակ և գիտական նյութեր**/pH միկրոէլեկտրոդ/	33691167/59	357,000	357,000
2.	**Լաբորատոր օժանդակ և գիտական նյութեր**/pCO2 միկրոէլեկտրոդ/	33691167/60	879,000	879,000
3.	**Լաբորատոր օժանդակ և գիտական նյութեր**/pO2 միկրոէլեկտրոդ/	33691167/74	936,000	936,000
4.	**Լաբորատոր օժանդակ և գիտական նյութեր**/Ռեֆերենս էլեկտրոդ/	33691167/61	426,000	426,000
5.	**Լաբորատոր օժանդակ և գիտական նյութեր**/Na միկրո էլեկտրոդ/	33691167/62	496,000	496,000
6.	**Լաբորատոր օժանդակ և գիտական նյութեր**/K միկրո էլեկտրոդ/	33691167/63	432,000	432,000
7.	**Լաբորատոր օժանդակ և գիտական նյութեր**/Ca միկրոէլեկտրոդ/	33691167/64	440,000	440,000
8.	**Լաբորատոր օժանդակ և գիտական նյութեր**/Cl միկրոէլեկտրոդ/	33691167/65	416,000	416,000
9.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/C1 կալիբրատոր լուծույթ/	33691420/472	211,320	211,320
10.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/C2 կալիբրատոր լուծույթ/	33691420/473	211,320	211,320
11.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/C3 հեղուկի Փաթեթ/	33691420/474	793,500	793,500
12.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ)**/Դեպրոտեինայզեր 125 մլ/	33691162/97	140,000	140,000
18.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/Պրոկալցիտոնինի որոշման շտապ թեսթ/	33691420/475	930,000	930,000
23.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/VITEK 2 GP 20 քարտ/	33691420/387	1,930,000	1,930,000
24.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/VITEK 2 YST 20 քարտ/	33691420/388	210,000	210,000
25.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/VITEK 2 NH 20 քարտ/	33691420/389	105,000	105,000
26.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/VITEK 2 AST 20 քարտ GN համար/	33691420/390	1,940,000	1,940,000
27.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/VITEK 2 AST 20 քարտ GP համար/	33691420/391	1,940,000	1,940,000
29.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ)**/BTA FN անաէրոբ միջավայր արյան ստերիլության որոշման/	33691162/99	406,000	406,000
30.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/GENbox անաէրոբ գազային գեներատոր/	33691420/393	54,000	54,000
31.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/GENbox միկրոաէրոֆիլ գազային գեներատոր/	33691420/394	57,000	57,000
32.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/մեզի քրոմոգեն միջավայր/	33691420/395	1,600,000	1,600,000
33.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ)**/BTA FA աէրոբ միջավայր արյան ստերիլության որոշման 100 շիշ/	33691162/100	406,000	406,000
35.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/Միկոպլազմա IST 2 25 թեսթ/	33691420/397	1,950,000	1,950,000
38.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/Տրանսպորտային միջավայր ուրոգենիտալ քսուքներում գոնոկոկերի աճեցման համար (10 ագար/սլայդ)/	33691420/398	30,000	30,000
39.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/Աղային 0,45% լուծույթ 3x500ml/	33691420/399	68,000	68,000
43.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/VITEK 2 ANC անաէրոբ մանրէների տարբերակման քարտ/	33691420/401	135,000	135,000
44.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/Անաէրոբ գեներատորի ինդիկատորներ 50 երիզ/	33691420/402	22,900	22,900
45.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/BTA Subculture units 100 units/	33691420/403	116,000	116,000
49.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/Գլյուկոզա 30 թեսթ/	33691420/404	2,310,000	2,310,000

50.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/Հիմնային ֆոսֆատազա 30 թեսթ/	33691420/405	840,000	840,000
51.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/Պանկրեատիկ-ամիլազա, 15 թեսթ/	33691420/406	680,000	680,000
52.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/Ամիլազա 15 թեսթ/	33691420/407	725,000	725,000
53.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/Բիլիռուբին 30 թեսթ/	33691420/408	2,640,000	2,640,000
54.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/Խոլեսթերոլ, 30 թեսթ/	33691420/457	625,000	625,000
55.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/Կրեատինին կինազա 15 թեսթ/	33691420/409	380,000	380,000
56.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/Կրեատինին 30 թեսթ/	3369142O/410	3,080,000	3,080,000
57.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/Գամմա գլուտամիլ տրանսֆերազա, 30 թեսթ/	33691420/476	960,000	960,000
60.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/Կալիումի 30 թեսթ/	33691420/413	1,650,000	1,650,000
61.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**Տրիգլիցերիդների 30 թեսթ/	33691420/414	1,400,000	1,400,000
62.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/Միզանյութ 15 թեսթ/	33691420/415	1,595,000	1,595,000
63.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/Ռեֆլոտրոն կլին և չեկ15/	33691420/477	86,250	86,250
Ընդամենը			**34,609,290**	**34,609,290**

** Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով*

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՆՏԱ գլխավոր վարչության պետ

Ն. ՅՈԼՉՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ
տնօրեն

Բ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ԱՀ 033 7548

Հավելված N 3
N ԳՀԱՊՁԲ-20-9/30-4 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
_
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
N ԳՀԱՊՁԲ-20-9/30-4 պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն